

մայնք, նոյն իսկ իսլամները կը պատուեն զայն: Ըստ
աւանդութեան, Ս. Կոյսը հոս կարճ ժամանակ մը ան-
ցուց իր աստուածային որդւոյն հետ: Լատին մատե-
նագիրները հայկական աւանդութիւններէ առնելով կը
գրեն թէ Ս. Կոյս Յիսուս մանուկին կաթ կը ջամբէր,
անոր կուսական կաթէն քանի մը կաթիլ գետին ին-
կան. ըստ ոմանց՝ այս դէպքը տեղի ունեցաւ այն ա-
տեն՝ երբ սուրբ Ընտանիքը Եգիպտոս պիտի փախ-
չէր(*): Խաչակիրներէն առաջ այս այրը նշանաւոր ե-
ղած է: Ուխտաւորները անկէ Ս. Կուսի կաթը անու-
նով սպիտակ և փխրուն քարերը կը բերեն Եւրոպայի
շատ մը եկեղեցիներուն համար: Այս կարգի քարերէն
մին էր զոր Բեթղեհէմի Ժէրարտ եպիսկոպոսը Պաղ-
տին Գ. թագաւորին բանակը տարած էր 1153 ին, Աս-
կաղոնի պաշարման ժամանակ:

Քառասնից այրը ուխտատեղի է քրիստոնեայ եւ
իսլամ կիներուն: Երբ անոնք կաթնտու են և կաթեր-
նին կը պակսի, այս այրը կուզան ու կ'աղօթեն, հոն
գտնուած կրային ժայռէն փոքր կտոր մը կը փրցնեն,
փոշիի կը վերածեն ու կը խմեն ջուրով: Դարերէ ի
վեր միլիոնաւոր կիներ տեղացի թէ ուխտաւոր այս
նպատակաւ հոն գիմած են բարեպաշտօրէն (Bar. gd-
էջ 229, Հան. 290):

Կը պատմուի նաև թէ երբ այն փխրուն քարե-
րուն փոշին նոյն եղանակաւ հովիւները գործածեն ի-

(*) Sir John Maundeville 1322 ին կը գրէ թէ Ս. Կոյսը իր ծոցին
մէջ այնչափ կաթ ունէր որ՝ ցաւ կը պատճառէր իրեն: Ան կը քա-
փէր իր կաթը մարմաւէ կարմիր ֆարեռու վրայ, այնպէս որ բոլոր-
վին հերմակ հեփերը սակաւ ին կը տեսնուին ֆարեռու վրայ (E. T. P.
էջ 163):